*Թալնեն արալի[2] պէս : Եւ է աշխարհն այն յոյժ ցրտային որպէս Լէհ · բնաւ եմիշ չի գովէր , ո՛չ խաղող , ո՛չ գինի , բայց միայն չողգամ , եղ , կաթ , մածուն եւ պաղ ջրեր : Եւ Սուրբ Կարապետու ճանապարհն ալ երկու-իրեք տեղ ղաֆար կ'առնուն : Կուարս տեսաւ գլխ սուպաշին · հարցաւ թէ «Ուստի՞ է սա» · ընկերս ասաց , թէ «Սեւրստու» · նա ասաց · «Սուտ ես · դա Ստամպօլցի է» · եւ ամէն կ'ասէին թէ «Սա այս տեղաց մարդկանց չէ · ապա թող տայ տասն ղուռուշ» , զոր ալլոց երկու ուռուպ կ'առնուր · ապա մէկ ղուռուշով հազիւ պրծուցին գլխ Հայք :*

*Եւ անտի եկաք ԹՕՋԼՈՒ ՏԱՂՆ · եւ նայ էր յոյժ բարձր , որ միւս կողմն սուրբ Կարապետն էր , կէս աւուր ճանապարհ : Եւ ասին թէ յորժամ Տրդատ եւ Լուսաւորիչ անդ էին , Կուարսու մինչ ի Մուշ հեծէլ էր :*

ՄՇՈՒ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

*Եւ իբրեւ տեսաք գլուպայքն Մշու սուլթան սուրբ Կարապետու՝ անկաք ի վերայ երեսաց մերոց եւ բազում խնդութեամբ լցեալ գոհացաք զԱստուծոյ , որ արժանի արար զմեզ տեսոյն սուրբ Կարապետին · փա՛ռք Աստուծոյ : Զոր էր մեծ եւ փառաւոր վիմաշէն կամարակապ մեծ եկեղեցի երկու գմպէթով · եւ վերեւն արճիճ որպէս մէջիդնուն վրայ · եւ*

53 *յոժ* : — 55 *չօղքամ* :

[2] *Արար-բեղուիններու նման* :